Դոկտոր Մայքլ Քամբեք
Գլխավոր Քարտուղար
Հեռախոս +32 484 75 28 25
Էլ. հասցե michael.kambeck@eufoa.org

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևան, 20 Ապրիլի 2012

Եվրախորհրդարանի բանաձևը աջակցության ուղերձ է ուղարկում Հայաստանին և Մինսկի խմբին

2012 թ. ապրիլի 18-ին Եվրախորհրդարանը (ԵԽ) ընդունեց երկու բանաձև Հայաստանի և Ադրբեջանի հետ Ասոցիացման համաձայնագրերի շուրջ տարվող բանակցությունների շրջանակներում: Հայաստանի Եվրոպացի Բարեկամներ (ՀԵԲ) կազմակերպությունը (www.EuFoA.org) ողջունում է այն փաստը, որ Արևելյան համագործակցության հարցում ԵԽ-ն հավատարիմ մնաց իր հիմնարար արժեքներին, մասնավորապես շարունակական ժողովրդավարացմանը և հավասարակշռված մոտեցմանը Լեռնային Ղարաբաղի հակամարտության դեպքում: Այդ զեկույցը հատկապես աջակցական է Հայաստանի համար, բայց այն հիշեցնում է նաև անակնկալվող սպասումների մասին հայկական կողմից: Ստորև համառոտ ներկայացնում ենք ամենակարևոր կետերը:

«Զեկույցները շատ աջակցական են, և դրանք պարունակում են նաև նոր դրական կետեր Հայաստանի համար: Եվրախորհրդարանը հստակ կերպով ընդունում է, որ Հայաստանը դարձել է ավելի եվրոպական և կոչ է անում ԵՄ-ին ավելի շատ աջակցություն ցուցաբերել այս գործընթացին», - մեկնաբանում է ՀԵԲ-ի գլխավոր քարտուղար Մայքլ Քամբեկը:

Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղին, ԵԽ-ն մեծապես սատարում է Մինսկի Խմբի Մադրիդյան սկզբունքները՝ որպես փաթեթ, բացահայտ նշելով «անվտանգության միջազգային երաշխիքները, որոնք կներառեն *միջազգային խաղաղապահ* առաքելություն՝ Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի վերաբերյալ իրավական պարտադիր ուժ ունեցող կամքի ազատ արտահայտման համար համապատասխան պայմաններ ստեղծելու համար»: Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղին՝ պատգամավոր Անդրեյ Կովաչևը, որը նաև Եվրոպա-Հայաստան Խորհրդի անդամ է, ԵԽ լիագումար նիստի ժամանակ նշեց որ. «այն կարող է լուծվել միայն խաղաղ ճանապարհով, միջազգային իրավունքի շրջանակներում և Մինսկի խմբում համաձայնեցված սկզբունքների համաձայն: ԵՄ ավելի ակտիվ դերը տարածաշրջանում մեզանից պահանջում է ավելի զգուշավոր և ճշգրիտ լինել մեր գնահատականներում, որպեսզի մենք չլինենք ինչպես «գնդակը ճենապակու խանութում» և հակամարտության լուծումը գտնելու հարցում օգնելու փոխարեն իրականում այն ավելի բարդացնենք»: Նույն հարցի շուրջ Մայքլ Քամբեկը նշեց հետևյալը. «ԵԽ-ն կրկին լիովին սատարում է ԵԱՀԿ Մինսկի Խմբի ջանքերը և պաշտպանել է այս հավասարակշռված դիրքորոշումը՝ ընդդեմ Ադրբեջանի աննախադեպ քարոզչական արշավի: Ես ուրախ եմ, որ պատգամավորները խնդիրներն ավելի մանրամասն դիտարկելուց հետո, տեսել են ծուղակները: Պատգամավորներից շատերը զգացին, որ դա շատ անտեղին է»:

ՀԵԲ-ն հասարակական կազմակերպություն է, որ ձգտում է նպաստել ԵՄ-Հայաստան համագործակցությանը և չի գործում որևէ երկրի կամ շահագրգիռ կողմի դեմ: Այս դիրքորոշմանը հավատարիմ մնալով՝ մենք պարզապես հրավիրում ենք հետաքրքրված լրագրողներին և հետազոտողներին դիմել պատգամավորներին և ավելի շատ տեղեկատվություն ձեռք բերել այս երեվույթի շուրջ: Լրացուցիչ աղբյուրները ներկայացված են ստորև: Մենք հավատում ենք, որ Մինսկի խմբի վրա հարձակվելը կամ առաջարկված խաղաղության համաձայնագրի սկզբունքների՝ մեկ կողմի նախընտրած կետերի առանձնացնելը երբեք չի կարող ծառայել խաղաղությանը կամ Ադրբեջանի ժողովրդի շահերին: Խաղաղության հաստատումը և ներքին տեղահանված անձանց և փախստականների վերադարձը թույլ տալու համար ԵԽ-ի բանաձևն այժմ պնդում է, որ Մինսկի խմբի առաջարկի բոլոր ասպեկտները պետք է իրականացվեն որպես մեկ փաթեթ, գումարած վստահությունն ամրապնդող միջոցառումները, ինչպիսիք են դիպուկահարների հեռացումը, ավելի շատ դիտորդների տեղակայումը և ավելի մեծ ծավալի հումանիտար աշխատանքի իրականացումը Լեռնային Ղարաբաղում: Այս մոտեցումը դրական է ինչպես Հայաստանի, այնպես էլ Ադրբեջանի և ողջ տարածաշրջանի համար:

Ադրբեջանական լոբբինգի անպատշաճ դրսևորումները հետաքննվում են լրագրողների կողմից ողջ Եվրոպայում

«Ադրբեջանը ձգտում է փայլեցնել իր իմիջը Եվրատեսիլից առաջ» (2012 թ. ապրիլի 1http://www.spiegel.de/international/world/0,1518,806769,00.html)

«»Հարցեր պատգամավորների՝ Ադրբեջան կատարած անվճար ուղևորության շուրջ» (2011 թ. օգոստոսի 29, http://www.thebureauinvestigates.com/2011/08/29/questions-over-mps-all-expense-paid-trip-to-azerbaijan/)

«Սիրուհի օգնականը պնդում է, որ պատգամավոր Մայք Հանկոկը հորդորել է լոբբի խմբին իրեն վճարել» (2011 թ. նոյեմբերի 18, http://www.thebureauinvestigates.com/2011/11/18/mike-hancock-urged-lobby-group-to-pay-lover-aide-claims/

«Հետախուզության կոմիտեում նստող Թորի պատգամավորը վճարվում է ադրբեջանական լոբբիի կողմից» (2011 թ. հոկտեմբերի 5, http://www.guardian.co.uk/politics/2011/oct/05/tory-mp-intelligence-committee-azerbaijan

Քաղվածքներ Եվրախորհրդարանի բանաձևից.

[2012 թ. ապրիլի 18-ին ընդունված Թոմաս Պյոտր Պորեբայի զեկույցից՝ վերնագրված «Եվրախորհրդարանի առաջարկությունները՝ ուղված Խորդին, Հանձնաժողովին և Արտաքին գործերի եվրոպական ծառայությանը ԵՄ-Հայաստան Ասոցիացիայի համաձայնագրի շուրջ ընթացող բանակցությունների վերաբերյալ»] Ամբողջական զեկույցը շուտով հասանելի կլինի մեր կայքում:

Հայաստան-ԵՄ

Բանաձևը.

- Ճանաչում է *«Հայաստանի եվրոպական ձգտումները և Արևելյան Համագործակցության ներքո Հայաստանի բարեփոխումների հավակնոտ օրակարգը»*
- կոչ է անում *«տրամադրել համապատասխան և ավելի թիրախավորված ֆինանսական և տեխնիկական աջակցություն Հայաստանին՝ համաձայն «ավելին ավելիի դիմաց» սկզբունքի»*
- ողջունում է *«Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու (ԽՀԱԱԳ) շուրջ բանակցություններ սկսելու որոշումը»*
- բարձր է գնահատում Հայաստանի *«ակտիվ մասնակցությունը բազմակողմ խորհրդարանական համագործակցությանը EURONEST-ի շրջանակներում, որը* եվրոպական արժեքների և սկզբունքների նկատմամբ հանձնառության լավ օրինակ է

հանդիսանում, որի կարևորության շուրջ լայն կոնսենսուս գոյություն ունի հայ հասարակությունում»

կոչ է անում *«կողմերին լիովին ներգրավվել Արևելյան համագործակցության բազմակողմ համագործակցությունում՝ առանց փոխկապակցելու այն հակամարտությունների հետ»*, (որը արձագանք է Ադրբեջանի կրկնվող փորձերին՝ խոչընդոտելու տարածաշրջանային համագործակցության ծրագրերին ամեն անգամ, երբ Հայաստանն է մասնակցում*):*

Լեռնային Ղարաբաղ.

- Առաջին հերթին ԵԽ-ը մեծապես սատարում է Մինսկի խմբի կողմից որպես փաթեթ առաջարկված Մադրիդյան սկզբունքներում ներառված բոլոր կետերը՝ առաջին անգամ բացահայտորեն ներառելով *«անվտանգության միջազգային երաշխիքներ, որ կներառեն միջազգային խաղաղապահ առաքելություն՝ Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի վերաբերյալ գալիք իրավական պարտադիր ուժ ունեցող կամքի ազատ արտահայտման համար համապատասխան պայմաններ ստեղծելու համար»:*
- Ավելին, Ասոցիացման համաձայնագիրը պետք է *«համապատասխանի միջազգային իրավունքի, մասնավորապես Հելսինկիի Եզրափակիչ Ակտում սահմանված սկզբունքներին, մասնավորապես՝ ուժի չկիրառում, տարածքային ամբողջականություն և ազգերի ինքնորոշման իրավունք»:*
- Բանաձևը ընդգծում է *«Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցում զգալի առաջընթաց կատարելու արժանահավատ հանձնառություններ»-ի կարևորությունը՝ «ներառյալ ընդհանուր ապառազմականացումը, շփման գծից դիպուկահարների հեռացումը, միջադեպերը ակտիվորեն կանխարգելող մեխանիզմը և շփման գծում կատարված զինադադարի խախտումների հետաքննությունը»:* [առաջին անգամ նշվում է ԵԽ-ի բանաձևում]:
- Այն հիշեցնում է *«բոլոր կողմերին, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորումը այլընտրանք չունի: շեշտում է, որ ուժի կիրառման ցանկացած սպառնալիքը վտանգում է միջազգային հանրության համատեղ ջանքերը»:*
- Այն նաև կոչ է անում *«ամրապնդել Եվրամիության՝ հակամարտությունները կարգավորելու և միջնորդելու կարողությունը Մինսկի խմբի ջանքերին ցուցաբերած աջակցությունն ընդլայնելու միջոցով»* մերժելով սկզբնական ձևակերպումը Ֆրանսիայի փոխարինման վերաբերյալ, ինչպես որ առաջարկվել էր ադրբեջանական և թուրքական լայնածավալ լոբբինգի արդյունքում: [ՀԵԲ-ն գտնում է, որ Ֆրանսիայի փոխարինումը կթուլացներ ԵՄ-ի կատարած ներդրումը և կդանդաղեցներ բանակցությունները, քանի որ այդ դեպքում միջնորդությan բարդ գործընթացը ամեն անգամ կպահանջեր ցուցումներ ԵՄ-ի 27 անդամ երկներից]:
- Եվ, վերջնականապես, այն հայտնում է *«աջակցություն հակամարտությունից տուժած շրջաններում իրականացվող մարդասիրական ծրագրերին, մասնավորապես ականազերծման գործունեությանը»:* [Մենք հուսով ենք, որ այս ուղերձը կօգնի Մեծ Բրիտանիայում հիմնված ականազերծմամբ զբաղվող Halo Trust հասարակական կազմակերպությանը՝ չնայած Ադրբեջանի ճնշումներին]:
- Ուշագրավ է նաև, որ Եվրախորհրդարանը կոչ է արել *«Ադրբեջանին չխոչընդոտել հայկական ծագում ունեցող երրորդ երկրների բազաբացիներին մուտքի արտոնագրերի*

տրամադրումը և վերացնել Հայաստան կատարված միջազգային հեռախոսազանգերի արգելքը»:

Հայաստան-Թուրքիա.

- Բանաձևը կոչ է անում *«սահմանի բացումը առանց նախապայմանների»* և շեշտում *«որ փակ սահմանի շարունակական առկայությունը անընդունելի է այն երկրների միջև, որոնք ձգտում են ԵՄ անդամակցությանը կամ ասոցացմանը և պահանջում է վերջ դնել այս իրավիճակին»:*

«Հայաստանի եվրոպացի բարեկամներ» կազմակերպությունը սիրով կտրամադրի մեկնաբանություններ կամ անհրաժեշտ վերլուծություններ անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն, լեհերեն, ռուսերեն և հայերեն լեզուներով: Եվրոպա-Հայաստան խորհրդի անդամները նույնպես պատրաստակամ են մեկնաբանություններ տրամադրել: Հարցերի դեպքում խնդրում ենք դիմել մեր քարտուղարություն:

«Հայաստանի եվրոպացի բարեկամներ» կազմակերպության և Եվրոպա-Հայաստան խորհրդի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք այցելել մեր կայք՝ www.EuFoA.org:

Լուսանկարները հասանելի են մեր կայքում, ինչպես նաև կտրամադրվեն ըստ պահանջի: Հեղինակային իրավունքի սահմաններում նկարների օգտագործումը թույլատրվում է: Օգտագործումն անվճար է, «Copyright: www.EuFoA.org» նշելը՝ պարտադիր: